ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-21/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 06 սեպտեմբերի 2021թ.

Ժամը 12:00

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Աշոտ Բադալով

Անդամներ՝
Հայկ Հովհաննիսյան, Տիրան Խաչատրյան

Քարտուղար՝ Հեղինե Թադևոսյան

1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգի N12 չափաբաժինը չկայացած հայտարարելու և մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին.

1.1 Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կարիքների համար դատապարտյալի հանդերձանքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-21/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 12 չափաբաժնի (բարձերեսներ) մասով հաղթող մասնակից է հայտարարվել Գոռ Շեկոյան Էդուարդի ԱՁ-ն: «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-21/3» ծածկագրով ընթացակարգի անգործության ժամկետն ավարտվել է 17.08.2021թ.-ին ժամը 00:00-ին, հաղթող ճանաչված մասնակից՝ Գոռ Շեկոյան Էդուարդի ԱՁ-ին պայմանագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք պայմանագրի նախագիծն ուղարկվել է անգործության ավարտից անմիջապես հետո՝ 17.08.2021թ.-ին:

1.2 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: 01.09.2021թ.-ին լրացել է Գոռ Շեկոյան Էդուարդի ԱՁ-ի կողմից պայմանագիր կնքելու ժամկետն, ուստի Գոռ Շեկոյան Էդուարդի ԱՁ-ն զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

1.3 Հաշվի առնելով սույն արձանագրության 1.1 և 1.2 կետերը «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց՝
ա) «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգի N12 չափաբաժինը հայտարարել **չկայացած,**

1.4 բ) մասնակից Գոռ Շեկոյան Էդուարդի ԱՁ-ի վերաբերյալ փաստաթղթերը ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Ա. Բադալով**

Քարտուղար _____ **Հ. Թադևոսյան**

Անդամներ՝ _____ **Հ. Հովհաննիսյան**

_____ **Տ. Խաչատրյան**